«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-402-03.02.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել սուտ տեղեկություններ տարածելու հանցակազմով:

Անդրադառնալով Նախագծով առաջարկվող հանցակազմի նպատակահարմարությանը՝ հարկ է նշել հետևյալը.

Նախագծի հիմնավորման համաձայն՝ «Առաջարկվող քրեականացման նախագիծը պայմանավորված է այդ արարքների հանրորեն մեծ վտանգավորությամբ: (…)

Սուտ տեղեկությունների ներազդումն անմիջականորեն ուղղված է մարդկանց մտածողության մոդելների ձևափոխմանը՝ ի շահ ներազդող կողմին անհրաժեշտ ուղղվածության, որը հանգեցնում է ներազդման ենթակա հանրույթի ապակայունացմանը, նրա ամբողջության, բարոյական դրվածքների, վստահության խախտմանը, մասնատմանը, նրա ներսում բաժանման, պառակտման, փոխադարձ օտարացվածության ներմուծմանը, թշնամության հրահրմանը: (…)»:

Հարկ է նշել, որ առաջարկվող հանցակազմի առավել վտանգավոր դրսևորումների համար ներկայումս անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, օրինակ՝ Օրենսգրքի 226-րդ կամ 397.1-ին հոդվածներով:

Բացի այդ, Օրենսգրքի 344-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է նախատեսվում դատավորին, դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ դատական ակտերի հարկադիր կատարողին զրպարտելու համար՝ պայմանավորված այդ արարքի հանրային բարձր վտանգավորությամբ:

Պետք է փաստել, որ Նախագծով նկարագրված արարքները կատարելու դեպքում անձանց արարքներում կարող են առկա լինել նաև այլ հանցակազմեր:

Օրինակ, եթե անձը սուտ տեղեկություններ տարածելու նպատակով նյութապես շահագրգռի առևտրային կամ այլ կազմակերպության ծառայողին, վերջինս էլ գույքային օգուտ ստանալով կամ ստանալու նպատակով կեղծ տեղեկություններ տարածի, ապա առկա կլինեն առևտրային կաշառք տալու և ստանալու, առևտրային կամ այլ կազմա-

կերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու հանցակազ-մերը: Եթե նույն արարքը կատարի պաշտոնատար անձը, ապա արարքը կարող է որակվել որպես կաշառք տալ և ստանալ, պաշտոնեական լիազորություններն անցնել:

Ինչ վերաբերում է Նախագծում նկարագրված արարքների հանրային առավել ցածր վտանգավորություն ունեցող դրսևորումներին, ապա հարկ է նշել, որ նման դեպքերում կարող է խոսք գնալ պատասխանատվության այլ տեսակների մասին: Օրինակ՝ անձինք զրպարտության համար կարող են ենթարկվել քաղաքացիաիրավական պատասխա-նատվության:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 135-րդ (զրպարտությունը) և 136-րդ (վիրավորանքը) հոդվածներով սահմանված արարքներն ապաքրեականացվել են «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2010 թվականի մայիսի 18-ի ՀՕ-98-Ն ՀՀ օրենքով:

Նախագծի հիմնավորման համաձայն՝ «(…) Կեղծ լուրեր տարածելը դարձել է քաղաքական պայքարի բաղկացուցիչ մաս և կարող է լուրջ ազդեցություն գործել նաև ընտրական գործընթացների վրա: (…)»:

Այս առումով հարկ է ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 151-րդ հոդվածով նախատեսված արարքը (ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակ-ցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը) ապաքրեականացվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2016 թվականի մայիսի 25-ի ՀՕ-57-Ն ՀՀ օրենքով:

Վերոգրյալի հիման վրա՝ ՀՀ կառավարությունն առաջարկում է ձեռնպահ մնալ Նախագծի ընդունումից:

Այդուհանդերձ հարկ է նշել, որ Նախագծում առկա են մի շարք թերություններ:

Այսպես, Նախագծի հիմնավորման մեջ առկա չէ տվյալ այն մասին, թե որն է հանդիսանում քննարկվող հանցակազմի հիմնական օբյեկտը:

Նույնիսկ նման պայմաններում, հաշվի առնելով քննարկվող հանցակազմի բնույթը, գտնում ենք, որ այն Օրենսգրքի 30-րդ գլխում (կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ) ընդգրկելու հանգամանքը խնդրահարույց է:

Նախագծով առաջարկվող Օրենսգրքի 325.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերում որպես պատժատեսակ նախատեսված է ազատազրկում՝ երկու տարի ժամկետով:

Հարկ է նշել, որ պատժատեսակի համար կոնկրետ պատժաչափ (բացարձակ որո-

շակի սանկցիա) նախատեսելը խնդրահարույց է պատասխանատվության անհատականացման սկզբունքի տեսանկյունից և զրկում է դատարաններին, հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները, հանցանք կատարած անձի նկատմամբ արդարացի պատիժ նշանակելու հնարավորությունից:

Նախագծով առաջարկվող Օրենսգրքի 325.1-ին հոդվածի 2-րդ մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում գույքային օգուտ ստանալով կամ ստանալու նպատակով կեղծ տեղեկություններ տարածելու համար:

Մինչդեռ, Նախագծի հիմնավորման մեջ նշված է, որ երկրորդ մասով նախատեսվող հանցագործությունը ավարտված է համարվում **լրատվամիջոցով, համացանցով կամ հասարակական վայրերում որևէ այլ միջոցով** կեղծ տեղեկություններ տարածելու պահից:

Նախագծով առաջարկվող Օրենսգրքի 325.1-ին հոդվածի 1-ին մասում օգտագործվում է «սուտ տեղեկություններ» ձևակերպումը, մինչդեռ 2-րդ մասում օգտագործվում է «կեղծ տեղեկություններ» ձևակերպումը:

Նախագծով առաջարկվող Օրենսգրքի 325.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վերլուծությունից բխում է, որ 1-ին մասով պատասխանատվություն է նախատեսվում 2-րդ մասով նախատեսված հանցագործության դրդիչի համար:

Կարծում ենք, նման կարգավորում նախատեսելու նպատակը հանդիսացել է դրդիչի նկատմամբ խրախուսական նորմի կիրառումը բացառելը:

Նման պայմաններում, ստացվում է, որ խրախուսական նորմը կիրառելի չէ դրդիչի նկատմամբ, սակայն կիրառելի է հանցագործության կազմակերպչի նկատմամբ, որն ընդունելի չէ: